

ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ԹԻԿՈՒՆՔՐ

(Սարդարապատի հաղթանակի 60-ամյակի առթիվ)

Հ. Գ. ԹՈՒՐՆՅԱՆ

Սարդարապատի փայլուն հաղթանակի օրերին Երևանում լույս էր տեսնում երեք թերթ՝ «Զանգ», «Հայաստանի աշխատավոր» և արևմտահայ դաշնակցականների «Աշխատանք» եռօրյա թերթը: Սակայն թուղթ չկար, տպագրական բազան շատ աղքատիկ էր: Թերթերը կանոնավոր լույս չէին տեսնում: Հաճախ հավաքում էին վաճառատների փաթեթի և ռեկլամի թղթերը, որոնց մի էջի վրա արդեն տպագրված էր լինում վաճառատան անունն ու հասցեն և ապրանքի տեսակը: Մաքուր էջի վրա գետեղվում էին թերթերի նյութերը, դեկավար մարմինների կոշերը և շատ սակավաթիվ քանակով տպվում ու փակցվում էին շենքերի պատերին:

«Զանգն» ու «Հայաստանի աշխատավորը» ոչ միայն շատ անկանոն էին լույս տեսնում, այլև անգույն թերթեր էին. «Աշխատանքը» հենց սկզբից օպոզիցիոն դիրք էր որդեգրել և շարունակ քննադատում էր, իր բառերով ասած «Թիֆլիս նստողներու», «դեկավարության պարտականություն և թյուրիմացություն ունեցողներու» անճարակությունը, ռազմավարական սխալ քաղաքականությունը և «ապիկարություն» ու «անճարակություն» բառերի փոխարեն գործ էր ածում «դավաճանություն» բառը:

Ահա թե Բաթումի անփառունակ հաշտությունից հետո ինչ էր գրուի «Աշխատանք» թերթը. «Եվ թող անոնք, որ վախցան արյունեն ու մահեն՝ զգան թե շարաղետ օր մը պիտի թաթախվեն արյան մեջ սպանդանոցի մը հանգույն. թող անոնք, որ փախան կռիվեն՝ իմանան, թե թշնամիին հետ կուրծք-կուրծքի եկած ատեն, դաշույն մը պիտի փնտռեն հուսահատական պայքարը մղելու համար, բայց չպիտի գտնեն: Այս մեծ դավաճանության հանդեպ, վշտի ծանրության տակ սահմուկած, մենք այլևս ուղեղ չունինք մտածելու, այլևս սիրտ չունինք խոսելու, չգիտենք ինչ բառ և խոսք, ինչ լեզու ու ոճ գործածենք, որովհետև մեկ անգամեն թաղվեցան մեր ամենանվիրական զգացումները, մեր հոգեկան ապրումները և մեր կոկորդին մեջ խեղդվեցան օգնության ճիշերը. դադրեցան զայրույթի պոռթկումները: Դառնա՞նք ենք հիմա անզգա ու անլեզու, երկչոտ ու ստրկամիտ... Ի՞նչպես հաշիվ տանք հարյուր-հազարավոր անշիրիմ նահատակներուն և ինչո՞վ սրբենք մեր նակատի մրուրը, երբ միայն անարգանքի սյունին բաժին պիտի ըլլանք, երբ միայն անեծքի պիտի արժանանանք»¹:

Երևան քաղաքում այդ օրերին ոչ պակաս, քան 150—200 հազար հայություն էր կուտակված: Վանից, Ալաշկերտից, Բուլանըխից, Բասենից ու Հին

¹ «Աշխատանք», Երևան, 8 հունիսի 1918:

Բայազետից եկածների վրա այդ օրերին գումարվել էին սուրմավեցիները, կողբեցիները, ղուրդուղուկեցիները, էջմիածնի և Աշտարակի գյուղացիների մեծ մասը, կաղզվանցիների, կարսեցիների, շիրակցիների մի մասը: Անբնակ չէր մնացել ո՛չ մի նկուղ, ո՛չ մի ծածկ, ո՛չ մի կիսափուլ տնակ ու այգիներ: Երբ տաղավար: Այգային խորհուրդը գտնվում էր բուլվարի դիմաց, ներկայիս նրա ժողովրդական կոմեդիայի թատրոնի շենքում, պարետատունը՝ բուլվարի մյուս կողմում՝ ներկայիս Սպայի տանը, Քաղաքային դուման՝ ներկայիս Շահումյանի արձանի դիմաց (որտեղ այն ժամանակ բարձրացած էր ռուսաց եկեղեցին), Սպանդարյանի շրջաօրթկումի և շրջկոմի շենքում, խմբագրությունները՝ նույնպես Շահումյանի անվան հրապարակի վրա, ներկայիս «Պիոներ կանչի» խմբագրության շենքում:

Բուլվարը և Անգլիական (ներկայիս Կոմունարների) այգին շարունակ լեփ-լեցուն էին որևէ նորություն սպասող խոռվահունց բաղնիքային: Մայիսի 18-ին ստացվել էր Երևանն առանց դիմադրության թուրքերի ողորմածությանը հանձնելու Համո Օհանջանյանի «խորհուրդը»: Այդ խորհուրդից հետո Երևանի Ազգային խորհուրդը մի պահ իր ֆունկցիան ավարտված է համարում և Երևանի Քաղաքային դուման դաշնակցական Թուրքանի նախագահությանը որոշում է Երևան քաղաքը հանձնել թուրքերի ողորմածությանը: Բնիկ երևանցիներից բացի, որոնց թիվը 15 հազարից չէր անցնում, մնացած հոծ հայությունը շատ լավ գիտեր օսմանյան թուրքերի ողորմածության գինը, դրա համար էլ ծառայելով այդ որոշման դեմ և մեկուկես օր տևող բողոքի միտինգ գումարեց: Ազգային խորհուրդը թողած, բաղնիքայինը գրոհեց Քաղաքային դումայի շենքի վրա, ցատումնալից ճառեր արտասանվեցին և, Ազգային խորհուրդից ու գեներալ Սիլիկովից դժգոհ, ուժեղ դիկտատոր որոնեցին: Բաղնիքայինը տալիս էր Բեհրգիևյան խաչի ասպետ, գնդապետ Զալինովի անունը, սակայն չէր ընդունում հրաժարվեց՝ պատճառ բերելով հայերեն չիմանալը: Զալինովից հետո բաղնիքայինը տվեց Արամի անունը և կանգ առավ Արամի վրա: Վանի ապրիլյան (1915-ին) ինքնապաշտպանության ժամանակ թիկունքն այնքան համոզեցին ղեկավարած Արամ Մանուկյանը (ղարաբաղցի Սարգիս Հարությունի Հովհաննիսյան) դիկտատոր հռչակվեց:

Եվ ճիշտ այն օրը, մայիսի 9/22-ին, երբ Սարգարապատի վրա ինքնաբերաբար սկսված հակահարձակումը պսակվեց փայլուն հաջողությամբ, «Աշխատանք» եռօրյա թերթում լույս տեսավ «Երևանը» վերնագրով խմբագրական հոդվածը, որ գրված էր այդ շրջադարձային հաղթանակից երկու օր առաջ:

Բերենք այդ պատմական օրերի վրա լույս սփռող հոդվածը որոշ կրճատումներով. «Իր 1 000 000-ոց հայությանը Երևանի նահանգը այժմ սիրտն է հայության: Բացի նախապես եղածներեն, վերջերս ալ հնուսեն մինչև վան թուրքահայերն ալ եկան և լեցվեցան հոն, ատկե ղատ ղանաղան զավառներեն տեղափոխվողներն ու զաղթողներն ալ ավելի խտացուցին մարդկային այդ հոծ շարքերը և դարձուցին ղանոնք ամեն տեղ խուռներամ բաղնիքային մը, մարդկային ծով մը...»

Ի՞նչ կպահանջեն այժմ անոնք, որոնք չէին ուղեր ճակատը՝ Կարին կամ ալլուր երթալ և ուրիշներու համար արյուն թափել: Հիմա ճակատը մոտիկցավ այնքան, որ պետք չկա հեռուն երթալու, հիմա ալլևս վտանգը բոլորի կաշիին»

է ուղղված, պիտի աշխատի՝ն արդյոք բոլորը միատեղ փրկելու իրենց կաշին: Երևանը, քաղաքը մանավանդ, համարյա ոչինչ ըրավ այս քանի մը ամիսներու ընթացքին և չկատարեց իր պարտքը. այժմ պետք է, որ ան իր պարտքը կատարի դեթ իր անձի վերաբերմամբ. սա գոյութեան պայքարի հրամայական պահանջ և երաշխիք է, որ պետք է դործադրե ամեն մարդ կամ հավաքականութիւն, եթէ ան որոշած է ապրել:

Եվ սակայն մարդիկ կան դեռ, որոնք չեն ուզեր այս վերջին ռոպին հասկանալ ատիկա և ապավինել իրենց բազկի ուժին, որոնք կպատրաստվին ընդունել թշնամիի լուծը աղ ու հաց մատուցանելով, որոնք կուզեն իրենց գույքը, դրամը և ստոր գոյութիւնը փրկել ամեն տեսակ զիջումներով իսկ, մարդիկ ալ կան, որ կպատրաստվին ըսելու կամ արդեն կըսեն թե այս իրադարձութիւններու և դժբախտութիւններու մեջ մեղավորը այն եկվոր տարրերն են...

Իսկ ինչ է զորքը այս բոլորի մեջ—գորշ, կազմալուծ զանգված մը, ոչ տարբեր հասարակութենէն: Չեք կրնար զանազանել թե ո՞րն է զինվորը, ո՞րը հասարակութիւն. անոնք բոլորը խառնված են իրար և այդ խառնվածքով կտապլտկին անդադրում: Այդ պատճառով կարելի է ըսել թե մենք գրեթե զորք չունինք, թեև անոնց քանակը տասնյակ հազարներու կհասնի: Մենք հաճախ աշխատած ենք թիվը ավելացնել և մինչև հիմա ալ կավելացնենք, իսկ նկատի չենք ունենար, թե այդ թիվն է, որ կխանգարե գործը և օգտակար չի ըլլար ամենուրեք: Վերջին դեպքերը² եկան ալ ավելի անձայն և երերուն դարձնելու մեր զորքի դրութիւնը և կազմալուծելու զայն... հիմա ստեղծված է ստրկային հոգեբանութիւն մը, անսահման զիջման կարծիքը, որոնք միայն կործանում և մահ կառաջնորդեն: Տարակույս չկա, որ ղեկավարները նույն կացութեան ենթարկած են ժողովուրդը, ինչ որ զորքը: Ճգնաժամային և արտակարգ վայրկյաններն դուրս անոնք իրենց անգործադրելի հրամաններով և հրահանգներով հրապարակը կողողեին, իսկ այժմ ծայրահեղ զգուշավոր քաղաքականութիւն մը ունին, գաղտնապահութեան աստիճան, կամ ավելի ձիշտ՝ չեն ուզեր պատասխանատվութիւն հանձն առնել այս կամ այն քայլը ձգելու համար և ժողովուրդը անդէկ նալի մը նման կղիմե միթիւնկներու մեջ նոր ղեկավարներ նաւելու, բայց չի կրնար գտնել, կամ դարձյալ նույն մարդկանց օձիքեն կբռնեն... Բոլորը, բոլորը պետք է գործի լծվեն, կատարեն իրենց պարտքը՝ իրենց հանդեպ: Եվ ասոր համար պետք է հրապարակ գա ձեռք մը, որը հրամայե միայն, առանց ժողովներ ընելու և բոլորի կարծիքը առնելու, իսկ մյուս բոլորը անխտիր ենթարկվեն անոր:

Այն ժամանակ միայն Երևանը կարող է թելադրել անոնց, որոնք այս բոլորին ֆմտհանդէս և այնքան ապիկարորեն կտնօրինեն հայութեան քախտը, և լսեցնել իր ձայնը անոնց, որոնք կամայականութիւններու զոհ են եղած և ստրկացուցած են ամբողջ ազգ մը»³:

Մեջ բերված այս հողվածն ամբողջութեամբ վերցրած հաստատում է այն թեզի ճշտութիւնը, որ Սարգարապատի հաղթանակն արգասիք չէ դաշնակցութեան կազմակերպական և սխրագործական ջանքերի, այլ ժողովրդի ինքնաբերաբար սկսված կենաց և մահու պայքարի:

² Նկատի ունի Կարսի և ապա Ալեքսանդրապոլի անկումը:

³ «Աշխատանք», Երևան, 22 մայիսի 1918:

Նորից հիշենք հողվածի հետևյալ նախադասությունը՝ «և ժողովուրդը անդեկ նավի մը նման կզիմե միթիկներու մեջ նոր ղեկավարներ ճարելու, բայց չի կրնար գտնել...»: Բարեբախտաբար գտնվեց այդ մարդը, դա Արամ Մանուկյանն էր, որ Սարգարապատի օրերին, վանի ինքնապաշտպանության օրերի նման, հմտորեն ղեկավարեց Սարգարապատի թիկունքը⁴: 1917 թ. ղեկավարեցին գալով Երևան, նա ծավալում է այնտեղ բավական լայն գործունեություն: Այսպես. 1918 թ. սկզբներին Երևանի Աղգային խորհուրդը հրապարակեց մի կոչ, որ գրել էր Մանուկյանը: Կոչում ասված էր. «Մենք համոզված ենք, որ ճակատի քայքայումը, հայ ժողովրդի ու Կովկասի զլխին ծանրացած վտանգը և Ռուսաստանի ազատության վտանգվիլը շատ մոտ են հայ գիտակից տարրերի սրտին, որ նրանք չեն կամենա թշնամու երիվարների ոտքի տակ նետել մեծ հեղափոխության փրկարար սկզբունքները, ուստի և վստահությամբ կանչում ենք նրանց հայ ժողովրդի ազատության գործին մասնակցելու:

Ամենից առաջ ձեզ ենք դիմում, հայ ուսանողներ և աշակերտներ, դուք դեռ կյանքի խճճված պայմաններում չեք մեռցրել ձեր արյունը, դուք դեռ ապրում եք վառվռուն գաղափարների աշխարհում: Ամենից առաջ ձեր սրտներում է արձագանք գտնելու ժողովրդի փրկության կոչը:

Դիմում ենք և ձեզ, հայ ուսուցիչներ ու բժիշկներ, փաստաբաններ, ինժեներներ և այլ մասնագիտության մտավորականներ: Դուք մինչև այսօր ձեր շնորհները ծառայեցրել եք ազգի խաղաղ կուլտուրական առաջադիմության: Այսօր, երբ ուղմի շեփորն է հնչում, պիտի դուրս գաք ձեր առանձնասենյակներից և դեպի պատերազմական պահանջները դիմեք:

Բաց ճակատով ենք դիմում ձեզ, փորձված հայ մարտիկներ, դուք մեր ժողովրդի ամենաանձնվեր պահապաններն եք և միշտ պատրաստ եք եղել զոհել ձեզ: Այսօր կրկին ձեր դռներն է բախում հայ ժողովրդի բախտը»:

Կոչը, ինչպես ասացինք, գրված է Արամ Մանուկյանի ձեռքով, այն բնորոշում է նրա գործունեությունը Երևանում, որը Սարգարապատի թիկունքն էր այդ օրհասական օրերին:

Արամի նախաձեռնությամբ հավաքագրվում ու կազմակերպվում է վանեցիների երկու գունդ՝ 1200 սվինով:

Էրզրումի անկումից (1918 թ. մարտի 12) հետո պետք էր փրկել Սարիղամիշի պահեստների հարստությունը: Արամը այդ գործը հանձնարարում է գեներալ Սիլիկովի ադյուտանտ, պորուչիկ Նիկոլայ Մակեդոնսկուն, որին հաջողվում է մի քանի անգամ գնալ Սարիղամիշ և անհրաժեշտ ուղղամթերքը բերել Երևան: Սարգարապատի օրերին Արամն իր անձնական տրամադրության տակ ուներ ավելի քան 100.000 փամփուշտ, արկ և այլ զենք ու ռազմամթերք:

⁴ Արամ Մանուկյանի հուշերը, ինչպես արտադրողի վրիպումներով, այնպես էլ խմբագրողի աղավաղումներով, տպվել են Բոստոնի «Հայրենիք» ամսագրում (1922 թ.) և Ռուբենի «Հայ հեղափոխականի հիշատակները» գրքի երկրորդ հատորում: Մենք զգտագործել ենք բնագիրը, որ Արամ Մանուկյանի դուստրը՝ Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի դասախոս, դոցենտ Սեդա Արամի Մանուկյանը սպա է տվել Մաշտոցի անվան Մատենադարանին:

1918 թ. խառնակ օրերին հայ-ադրբեջանական ընդհարումներ տեղի ունեցան Բաքվում, Գանձակում, Ղարաբաղում, Զանգիբասարում և այլ վայրերում, բայց այդպիսի ընդհարումներ տեղի չունեցան Երևան քաղաքում: Այդ բանի համար զգալի շարժում պարտական ենք Արամ Մանուկյանին, որը բարեկամական սերտ հարաբերություններ էր հաստատել Երևանի մահմեդականների ղեկավար Ալի խանի հետ և այդ բարեկամությամբ կանխում էր որևէ թշնամական ընդհարում:

Կարսի անկման ժամանակ, տեսնելով հայկական ինքնապաշտպանության անզորությունը, Արամը ֆինանսական օգնություն է ցույց տալիս հայկական զորամասերին: Նա Երևանում գործակցում էր նաև տեղի բոլշևիկների հետ:

Սարիղամիշի անկումից հետո գնդապետ Սամարցյանի գունդը կիսվում է՝ մի մասը նահանջում է դեպի Կարս, մյուս մասը՝ Կաղզվանի վրայով, Կողբի տակով Կարակալայի կամուրջով մտնում է Արարատյան դաշտ: Այդ վաշտերը չէին մտնում երևանյան զորամասի կազմի մեջ և գեներալ Սիլիկովը նրանց ուղարկում է Քանաքեռ՝ Արամի տնօրինության տակ: Արամն իր տնօրինության տակ ունեցած զինապահեստից լրիվ սպառազինում է այդ վաշտերը, որոնց Սարգարապատի կովի երկրորդ օրն իսկ ուղարկում է Սարգարապատ:

Արամի տնօրինության տակ են անցնում նաև Ալեքսանդրապոլի անկման օրերին դեպի Երևան տանող երկաթուղու պաշտպանության դիրքերում կանգնած և ապա Արարատյան դաշտ նահանջած գնդապետներ Ալեքսանդր Շնեուրի և Զալինովի թուլացած զորամասերը: Արամը նրանց ևս զինում ու կարգի է բերում:

Սարգարապատի կռիվների նախօրեին Արամը, նկատի ունենալով, որ թուրքերը Երևանի վրա կարշավեն ոչ միայն երկաթգծի ուղղությամբ, այլև Ապարանի ու Եղվարդի վրայով, Երևան քաղաքի միլպետ Սեդրակ Զալալյանին և գյուղական վայրերի միլպետ Արսեն Աղային (Խենթի որդուն) իրենց միլիցիոներներով նախապես ուղարկում է Բաշ-Ապարան:

Մայիսի 22-ին, կեսօրին Երևանում լսվում էին թնդանոթի ձայները: Թեմական դպրոցի միջին դասարանների աշակերտները բարձրացել էին ուսսական վիթխարի եկեղեցու (ներկայիս Շահումյանի արձանի տեղը) զանգակատունը և անընդհատ զանգահարում էին: Դեռևս արևը մայր չէր մտել, երբ ստացվեց Սարգարապատի վերագրավման և թուրքերի խուճապահար փախուստի լուրը: Ժողովրդի ցնծությունն անպատմելի էր:

Արամ Մանուկյանը վանի փորձով առաջինը հասկացավ, որ վերջապես սկսվել է ժողովրդական անպարտելի պատերազմ: Այդ նույն օրը երեկոյան, երբ ամեն ինչ արդեն հայտնի էր Երևանում, նա իր մոտ է կանչում վանի ապրիլյան (1915 թ.) ինքնապաշտպանության Այգեստանի ղեկավար, ռամկավար Արմենակ Եկարյանին և ուրիշներին ու պատվիրում է Երևանը նախապատրաստել փողոցային կռիվների, առաջին հերթին ամրացնել Հրազդանի ձորի վրա իշխող Ս. Սարգիս եկեղեցու և Կոնդի Ս. Աստվածածին բարձրադիր եկեղեցու շրջակայքը:

Այդ գիշեր Անգլիական այգում «սկետինգոնում» (ներկայիս մանկական ունիվերսիտետի բակում) ուսուցչական սեմինարիայի (ներկայիս համալսարանի հին շենքի) դռանը աշխարհազորայիններ էին գրվում ճակատ գնա-

լու համար: Արամը «պիկապով» շրջագայում էր գրանցման կետերը, ոգևորիչ խոսքեր էր ասում և շարունակում էր իր երթը դեպի գրանցման մյուս կետերը: Առավոտյան էջմիածնից հաղորդեցին՝ դադարեցնել աշխարհազորայինների ուղարկումը, պահանջեցին սպա ուղարկել միայն:

Սարդարապատի առաջին վճռական հաղթանակի օրը, մայիսի 22-ին, հայկական կորպուսի հրամանատար, գեներալ Նազարբեկովը մեկ օրով եկել էր Երևան: Հետևյալ օրը Արամը գեներալ Նազարբեկովի անունից հայ զինվորներին և գյուղացիներին ուղղված հատուկ կոչ է գրում, տպագրում և գեներալ Համասյանի (Գամազովի) հետ ուղարկում Դիլիջան: Սարդարապատի հաղթանակով ոգեշնչված հայ զինվորն ու գյուղացին հերոսական հակահարձակման են անցնում նաև Ղարաբախի ռազմաճակատում:

Այսպիսով, եթե ռազմաճակատում մարտերը ղեկավարում էր ռուսական բանակի սպա Դանիել-Բեկ Փիրոսովը, ապա թիկունքի աշխատանքները գլխավորում էր Վանի 1915 թ. հայտնի պաշտպաններից մեկը՝ Արամ Մանուկյանը:

Մեծ էր Սարդարապատի տակ ընկածների թիվը: Զոհված աշխարհազորայիններից շատերը թաղվեցին իրենց գյուղերում, դրսեցիներից զոհվածներին թաղեցին Գայանեի վանքի բակում (Խենթի գերեզմանի կողքին՝ եղբայրական գերեզմանի մեջ), բնիկ երևանցիներին բերեցին Երևան և թաղեցին ներկայիս Կոմիտասի անվան այգում:

Անշուք անցավ հաղթանակ տարած զինվորների թաղումը: Սակայն չեմ կարող մոռանալ հետևյալ դեպքը: Սովետահայ գրականության վարպետ հիմնադիրներից Դերենիկ Դեմիրճյանը, որն Ալեքսանդրապոլի անկումից առաջ Թիֆլիսի հայ Ազգային խորհրդի դպրոցական բաժնի կողմից տեսչական գործով Երևան էր գործուղվել, կտրված մնացել էր Երևանում: Արարատյան դաշտի հայության աղեկտուր նահանջը դեպի Կոտայք, հայ ժողովրդի վերջին ճիգերի գործադրումը, աշխարհազորայինների հավաքագրումը և ռազմաճակատից ստացվող առաջին ոգեշունչ լուրերը — այդ բոլորը սեփական աչքով տեսել էր Դեմիրճյանը: Նա առաջինն արժեքավորեց և զնահատեց Սարդարապատի ճակատամարտի պատմական նշանակությունը հայ ժողովրդի համար, նրա գոյատևության համար:

Զոհվածների տխուր թաղման ժամանակ նա կանգնեց հողաթմբին և գրպանից հանելով մի ճմրթված թուղթ, կարդաց.

Այսօր, այս վեհ ուրախության և խոր սուգի հանդեսին,
Ո՛վ մարմարե նահատակներ, կանգնած ձեզ հետ միասին,
Ո՛վ խնկելի Սարդարապատ, Ղարաբախ, Արարան,
Խոսեցնում եք իմ բերան:

Սակայն ինչպե՞ս խոսեմ ձեզ հետ՝ ցավի դողը իմ շուրթիս,
Ի՛մ, ապրողիս խղճի խայթով՝ մեռածներիդ հանդիման,
Ինչպե՞ս հնչեմ ձեր անունը՝ ամոթանքը ճակատիս,
Գովեմ ձեր բառն աննման:

Բայց և ինչպե՞ս լռեմ հիմա, ինչպե՞ս լռե իմ բերան՝
Վերհիշելով Սարդարապատ, Ղարաբախ, Արարան.
Դուք գնացիք, սակայն ինչպե՞ս իմ լուռ հոգին այսուհետ
Զխոսի ձեր շուրթի հետ:

Ահա տեսնում եմ ձեզ՝ մահատեսիլ, խստադեմ,
 Ծրբ որ մահը մեռցնելու դուք գնացիք մահի դեմ,
 Եվ դուք գտաք ձեր պտրածը—ձեզ համար՝ մահ՝ շարաթույն,
 Հայրենիքին փրկություն:

Եվ այլ ինչ բան պիտի սազեր հերոսական ձեր սրտին,
 Բուն այդ կատակն օրհասական հանդեպ մահվան գոռ առստին.
 Ո՞վ ավելի արհամարհեց, տեսավ մահը շրմեռած,
 Եվ մեռնելիս շրդողաց:

Ահա այս վեհ՝ ռազմադաշտում, որտեղ լսվեց մի մեծ օր,
 Ձեր ռազմական խրոխտ գուշը, վերջին գուշը փրկության՝
 Մենք երկու տոն ունենք այսօր—մեկ ձեր տոնը «սգավոր»,
 Մեկ մեր սուգը խնդության»:

Ահա ուժգին որոտում է ժողովուրդը ամբոխված,
 Ձեր խնկելի շուքերի հետ, ռազմադաշտում հայրենի.
 Ահա՛ կարմիր դրոշակներ՝ ձեր արյունով կարմրած
 Եվ արյունով բյուրերի:

Դուք հաղթեցիք, ո՞վ ընկածներ, մահվամբ զմահ կոխեցիք:
 Դուք հաղթեցիք, և շրթողիք ոչինչ էլի հաղթելու.
 Մկրտվեցիք դուք մահի մեջ, մահվամբ դառաք գեղեցիկ,
 Ձեզ փա՛ռք հավետ, ալելու՛յ:

ТЫЛ САРДАРАПАТА

(К 60-летию победы под Сардарapatом)

А. Г. ТУРШЯН

(Резюме)

После падения Александрополя (15 мая 1918 г.) армянский народ оказался в весьма тяжелом положении. Турецкие захватчики получили возможность истребить и восточных армян. По призыву Армянского национального совета г. Еревана, в который входили все слои населения, армяне Араратской долины встали как один и в героическом сражении под Сардарapatом не только остановили наступающих турок, но и разгромили их отборную дивизию, обеспечив тем самым свое дальнейшее существование. Боевыми действиями армян на фронте руководил полковник русской армии Даниэл-бек Пирумян, а тылом—Арам Манукян.

5 «Հայաստանի աշխատավոր» թերթը Դ. Դեմիրճյանի այս բանաստեղծությունը տպագրել էր մի ևրեսն օգտագործված թղթերի վրա և փակցրել պատերին: Բարեբախտաբար, մի օրինակ պահպանվել է Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում (տե՛ս Ե. Դեմիրճյանի լրացուցիչ ֆոնդ, № 48):